

# ԿԱՆՈՒՆ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

## GANTEGH

BULLETIN DU DIMANCHE  
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE  
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



## GANTEGH

SUNDAY BULLETIN OF  
ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

[WWW.SAINTGREGORY.CA](http://WWW.SAINTGREGORY.CA)

**ԿԻՐԱԿԻ, 1 ՅՈՒԼԻՍ 2018**

**2 Կիր. Չկնի Յոգեգալստեան  
Բարեկենդան Վարդավառի Պահոց  
/ ԹԻԻ 65**

**SUNDAY, July 1, 2018**

**6th Sunday After Pentecost**

**Paregantan of the Fast of  
Transfiguration**

**/ NO. 65**



**Today's Bible Readings:**

**Romans 11:13-24 / Matthew 14:13-21 |**

**Պատարագիչ՝**

**ԱՐՃ. Տ. ՀԱՅ ԱՐԻ ԲՅՆՅ. ԹԱՆԱՇԵԱՆ**

**Celebrant:**

**REV. FR. HAY ARI TANASHIAN**

**Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan,**

**Dn. Vahan Shakaryan,**

**Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan**

**Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjan**

**Choirmaster: Mr. Sarkis Barsemian**


**Organist: Mr. Karen Manucharyan**

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՀՈՈՍԷԱՅԻՆԵՐՈՒՆ 11:13-24

**13**Բայց ձեզի՝ հեթանոսներուդ կ'ըսեմ. «Քանի որ հեթանոսներուն առաքեալն եմ՝ կը փառաւորեմ իմ սպասարկութիւնս, **14**յուսալով բարի նախանձը գրգռել իմ մարմինես եղողներուն, եւ փրկել անոնցմէ ոմանք»: **15**Որովհետեւ եթէ անոնց մեկուսացուիլը աշխարհի հաշտութիւն եղաւ, հապա ի՞նչ պիտի ըլլայ անոնց վերստին ընդունուիլը, եթէ ոչ՝ կեանք մեռելներէն: **16**Ուրեմն՝ եթէ երախայրիքը սուրբ է, նոյնն է նաեւ զանգուածը. ու եթէ արմատը սուրբ է, ուրեմն ճիւղերն ալ:

**17**Եթէ այդ ճիւղերէն ոմանք կտրուեցան, ու դո՛ւն՝ որ վայրի ձիթենի էիր, պատուաստուեցար անոնց մէջտեղ եւ հաղորդակից եղար անոնց հետ ձիթենիին արմատին ու պարարտութեան, **18**մի՛ պարծենար ճիւղերուն դէմ: Իսկ եթէ պարծենաս, գիտցի՛ր թէ դո՛ւն չես որ կը կրես արմատը, հապա արմատը՝ քեզ: **19**Ուրեմն պիտի ըսես. «Ճիւղերը կտրուեցան՝ որպէսզի ես պատուաստուիմ»: **20**Լա՛ւ. անոնք կտրուեցան անհաւատութեան պատճառով, ու դուն հաստատ մնացած ես հաւատքով: Մեծամիտ մի՛ ըլլար, հապա վախցի՛ր. **21**որովհետեւ եթէ Աստուած չխնայեց բնական ճիւղերուն, գուցէ չխնայէ նաեւ քեզի: **22**Ուրեմն տե՛ս Աստուծոյ քաղցրութիւնն ու խստութիւնը. խստութիւն՝ ինկածներուն հանդէպ, իսկ բարութիւն՝ քեզի հանդէպ, եթէ յարատեւես անոր քաղցրութեան մէջ. այլապէս՝ դո՛ւն ալ պիտի կտրուիս: **23**Իսկ անոնք ալ պիտի պատուաստուին՝ եթէ չմնան իրենց անհաւատութեան մէջ, որովհետեւ Աստուած կարող է դարձեալ պատուաստել զանոնք: **24**Քանի որ եթէ դուն կտրուեցար այն ձիթենիէն՝ որ բնութեամբ վայրի էր, եւ հակառակ բնութեան՝ պատուաստուեցար լաւ ձիթենիի մը վրայ, ա՛լ ո՛րչափ աւելի ասոնք՝ որ բնական ճիւղերն են, պիտի պատուաստուին իրենց սեփական ձիթենիին վրայ:

## ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 13:24-30

**13**Երբ Յիսուս լսեց, անկէ նաւով մեկնեցաւ ամալի տեղ մը՝ առանձին: Երբ բազմութիւնները լսեցին, ոտքով հետեւեցան անոր՝ իրենց քաղաքներէն: **14**Երբ դուրս ելաւ, տեսնելով մեծ բազմութիւն մը՝ գթաց անոնց վրայ ու բուժեց անոնց հիւանդները: **15**Իրիկունը՝ իր աշակերտները եկան եւ ըսին. «Հոս ամալի տեղ մըն է, ու ժամանակը արդէն անցած է. արձակէ՛ բազմութիւնը, որպէսզի երթան գիւղերը եւ կերակուր գնեն իրենց»:

16 Յիսուս ըսաւ անոնց. «Պէտք չկայ որ անոնք երթան, դո՛ւք տուէք անոնց՝ որ ուտեն»:  
17 Անոնք ալ ըսին. «Յոս ուրիշ բան չունինք, բայց միայն հինգ նկանակ ու երկու ձուկ»:  
18 Ըսաւ անոնց. «Յո՛ւս՝ ինծի՛ բերէք զանոնք»:  
19 Եւ հրամայեց որ բազմութիւնը նստեցնեն խոտին վրայ: Յինգ նկանակներն ու երկու ձուկերը առաւ, դէպի երկինք նայելով՝ օրհնեց, եւ կտրելով նկանակները՝ տուաւ աշակերտներուն, աշակերտներն ալ՝ բազմութեան:  
20 Բոլորը կերան ու կշտացան, եւ վերցնելով անելցած բեկորները՝ տասներկու կողով լեցուցին:  
21 Անոնք որ կերան՝ հինգ հազարի չափ այր մարդիկ էին, կիներէն ու մանուկներէն զատ:

## ROMANS 11:13-24

13 For I speak to you, the gentiles, inasmuch as I am an emissary to the gentiles, I esteem my service, 14 if somehow, I might provoke to jealousy *those who are* my flesh and save some of them. 15 For if their casting away is the restoration to favour of the world, what is their acceptance but life from the dead? 16 Now if the first-fruit is set-apart, the lump is also. And if the root is set-apart, so are the branches. 17 And if some of the branches were broken off, and you, being a wild olive tree, have been grafted in among them, and came to share the root and fatness of the olive tree, 18 do not boast against the branches. And if you boast, *remember*: you do not bear the root, but the root *bears* you! 19 You shall say then, “The branches were broken off that I might be grafted in.” 20 Good! By unbelief they were broken off, and you stand by belief. Do not be arrogant, but fear. 21 For if Elohim did not spare the natural branches, He might not spare you either. 22 See then the kindness and sharpness of Elohim: on those who fell sharpness, but toward you kindness, if you continue in *His* kindness, otherwise you also shall be cut off. 23 And they also, if they do not continue in unbelief, shall be grafted in, for Elohim is able to graft them in again. 24 For if you were cut out of the olive tree which is wild by nature, and were grafted contrary to nature into a good olive tree, how much more shall these who are the natural *branches*, be grafted into their own olive tree?

## MATTHEW 14:13-21

13 Now when **יהושע** heard it, He withdrew from there by boat to a deserted place, by Himself. And when the crowds heard it, they followed Him on foot from the cities. 14 And when **יהושע** came out, He saw a large crowd and was moved with compassion for them, and healed their sick. 15 And when evening came, His taught ones came to Him, saying, “This is a deserted place, and the hour is already late. Dismiss the crowds, so that they might go into the villages and buy food for

themselves.” 16But יהושע said to them, “They do not need to go away, give them to eat yourselves.” 17And they said to Him, “We have here only five loaves and two fish.” 18And He said, “Bring them here to Me.” 19And commanding the crowds to sit down on the grass, and taking the five loaves and the two fish, and looking up to the heaven, He blessed and broke and gave the loaves to the taught ones. And the taught ones gave to the crowds, 20and all ate and were satisfied. And they picked up the pieces left over – twelve baskets, filled. 21And those who ate were about five thousand men, besides women and children.



# ՏՕՆԵՐ

Հինգշաբթի, 28 Յունիս 2018

## Եղիշէ Մարգարէի Յիշատակութեան Օր

Մարգարէները այն անձերն են, որոնց միջոցով Աստուած կը խօսէր եւ ժողովուրդին կը յայտներ իր կամքը:

Տերը կը խօսի անոնց հետ՝ իբրեւ իր բարեկամներուն, եւ կը բացայայտէ իր ծրագիրները, ինչպէս գրուած է.

«Մի՞ թէ ես իմ ծառայ Աբրահամէն

գաղտնի պիտի պահեմ այն, ինչ ընելու եմ» (Ծն. 18.01): Այդ պատճառով է, որ

Աստուածաշունչին մէջ յաճախ կը հանդիպինք հետեւեալ

արտայայտութիւններուն. «Աստուած ըսաւ ինձի», «Այսպէս կ'ըսէ Աստուած»

եւ այլն: Եկեղեցական ւեհանութեան մէջ «մարգարէ» կը կոչուին յատկապէս

հին ուխտի այն ընտրեալ անձերը, որոնց Տերը ծառայութեան կը կանչէր

Իսրայելի ժողովուրդին մէջէն: Անոնց շրթունքներէն կը հնչէին ոչ միայն հեռու

եւ մօտ ապագային կատարուելիք իրադարձութիւններու

կանխայայտումներ, այլեւ յանդիմանութիւն ու

նախազգուշացում, ապաշխարութեան կոչ ու փրկութեան աւետում:

Աստուծոյ խօսքի տարածողը եղած է նաեւ Եղիշէ մարգարէն (Եղիշէ կը

նշանակէ «Աստուած փրկութիւն է»): Ան աշակերտն է Եղիա մարգարէին եւ

ապրած է Հրեաստանի մէջ Քրիստոսէն առաջ 9-րդ դարուն: Եղիա մարգարէն

Տիրոջ հրամանով ընտրած է Եղիշէին իբրեւ իր յաջորդը:

Եղիշէն թէեւ աշակերտն էր եւ յաջորդը Եղիային, սակայն անոնց կեանքին,

նկարագրին եւ գործունեութեան մէջ հսկայական տարբերութիւն կայ: Եթէ

Եղիան հիմնականին մենակեաց էր, կ'ապրէր մարդոցմէ հեռու վայրերու մէջ,

ապա անոր աշակերտ Եղիշէն միշտ ապրած է մարդաշատ վայրերու մէջ:

Եղիշէն մարգարեացած է 6 իսրայելցի թագաւորներու օրերուն աւելի քան 65

տարեկան հասակին:

Երբեմն, Աստուծմէ ընտրուած ըլլալը ապացուցելու համար մարգարէները

Բարձրեալին զօրութեամբ հրաշքներ կը գործէին:



Եղիշէն Յին Կտակարանի այն մարգարէներէն է, որ գործած է ամենաշատ թիւով հրաշքները Մովսէս մարգարէէն յետոյ: Անոր գործած հրաշքներէն են Նեեման Ասորիի բժշկութիւնը, Յորդանանի ջուրերուն բաժանումը, Երիցովի աղբիւրին ջուրը խմելու համար պիտանի դարձնելը, աղքատ այրիին քաղցէն փրկելը՝ անոր ամանի ն մէջի իւրը անպակաս դարձնելով, Սամարացի կնոջ զաւակին յարութիւն տալը եւ ուրիշներ: Եւ ինչպէս որ կենդանութեան օրերուն ան հրաշքներ գործած էր, այդպէս եւ մահէն յետոյ: Անոր մահէն մէկ տարի ետք, երբ անոր գերեզմանին մէջ կը գցեն մեռեալ մը, վերջինս, դպչելով Եղիշէի ոսկորներուն, յարութիւն կ'առնէ:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Եղիշէ մարգարէի յիշատակութիւնը կը նշէ Հոգեգալստեան հինգերորդ Կիրակիին Հինգշաբթի օրը:

**Շաբաթ, 30 Յունիս 2018**

**Քրիստոսի 12 Առաքեալներու եւ Ս. Պօղոս 13-րդ Առաքեալի Յիշատակութեան Օր**

Յիսուս Քրիստոսի ընտրած 12 առաքեալները Քրիստոսի աշակերտներն ու Քրիստոսի վարդապետութեան առաջին տարածողներն էին, յարուցեալ Քրիստոսի վկաները:

«Եւ ան իր մօտ կանչելով տասներկու աշակերտներուն՝ անոնց իշխանութիւն տուաւ պիղծ դէներու վրայ՝ հանելու անոնք եւ բժշկելու ամէն ցաւ եւ ամէն հիւանդութիւն» (Մատթ. 10:1): Պետրոս, Անդրեաս, Յակոբոս, Յովհաննէս, Մատթէոս, Բարդուղիմէոս, Փիլիպոս, Թովմաս, Թադէոս, Յակոբոս (Ալփյան), Շմաւոն (Կանանացի) եւ Յուդա առաքեալներն էին անոնք, որոնցմէ վերջինը եղաւ Յիսուսին մատնիչը: Հետագային 12 առաքեալներու շարքին Յուդայի փոխարէն ընտրուեցաւ Մատաթիա առաքեալը: Հաւատարիմ Յարուցեալ Յիսուսի վերջին պատգամին, (տես Մատթ. 28:18-19) առաքեալները Յիսուսի պատուիրանները քարոզեցին ու ուսուցանեցին տարբեր ազգերու,



«մկրտեցին անոնց Յօր եւ Ռրդւոյ եւ Սուրբ Յոգիին անունով», այսպիսով դառնալով Քրիստոսի եկեղեցւոյ հիմնադիրները: Քրիստոսի պատուիրաններուն ամենամեծ քարոզիչներէն է Ս. Պօղոս առաքեալը, որուն Քրիստոնեայ եկեղեցին կը ճանչնայ իբրեւ 13-րդ առաքեալ: Առաքեալներու գործունեութեան նուիրուած է Աստուածաշունչի «Գործք Առաքելոց»-ը: Ս. Պօղոս առաքեալի քարոզչութեան, անձին ու գործունեութեան վաւերագիրեր են նաեւ՝ Պօղոս առաքեալի թուղթերը, 14 նամակները՝ հասցեագրուած եկեղեցական համայնքներուն ու անհատ Քրիստոնեաներուն: Հայ Առաքելական Եկեղեցին 12 առաքեալներու եւ 13-րդ առաքեալ ճանչցուած Պօղոս առաքեալի յիշատակը կը նշէ միասնաբար Վարդավառէն մէկ շաբաթ առաջ, Վարդավառի Բարեկենդանին նախորդող շաբաթ օրը: Հայ եկեղեցւոյ տօնացոյցին մէջ կան նաեւ՝ առաքեալներու յիշատակութեան առանձին տօներ:

Կիրակի, 1 Յուլիս 2018

## Բարեկենդան Վարդավառի Պահոց

Վարդավառի՝ Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան տօնին նախորդող շաբաթապահքը Հայ Եկեղեցւոյ մէջ կը կոչուի Վարդավառի պահք: Պահքի վերջին շաբաթ օրը նաւակատիք է, այսինքն՝ այդ օրը կը թոյլատրուի ձկնեղէն եւ կաթնեղէն օգտագործել:



## Holidays

Thursday

2018-06-28

## Commemoration of the Prophet Elisha

Prophet Elisha has lived in the IX century B.C. He was the disciple of the Prophet Elisha. 13 wonders are ascribed to the prophet Elisha



and about those wonders it is told in the First and Second Books of the Holy Bible. Prophet Elisha has continued to work wonders even after his death. It is told in the Old Testament that a year after the prophet's death the corpse of a dead man was thrown into Elisha's tomb. As soon as the body came into contact with Elisha's bones the man came back to life and stood up.

**Saturday**

**2018-06-30**

**Commemoration of Christ's  
twelve Apostles and thirteenth  
Apostle - St. Paul**


Twelve Apostles elected by Our Lord Jesus Christ, were Christ's disciples and first preachers of His doctrine, as well as the Incarnate Christ's witnesses.

"Jesus called his twelve disciples together and gave them authority to drive out devil spirits and to heal every disease and every sickness." (The Gospel according to Matthew 10:1).

These were the names of the twelve Apostles Simeon (called Peter), Andrew,

James, John, Philip, Bartholomew, Thomas, Matthew, James son of Alphaeus, Thaddeus, Simon the Patriot and Judas Iscariot, who betrayed Jesus. Later instead of Judas Iscariot Apostle Matthias was chosen, who was added to the group of eleven apostles.

Remaining faithful to Incarnate Christ's last message the apostles went to all peoples everywhere and preached and taught the Commandments of Jesus, baptized them in the name of the Father, the Son and the Holy Spirit, thus becoming the founders of the Christ's Church. One of the greatest preachers of Christ's commandments is Apostle Paul, who is recognized by the Christian Church as the thirteenth Apostle.





The section of the Bible called “The Acts of the Apostles” is dedicated to the apostles’ activity. And there are references on Apostle Paul’s preaching, his person and his activity in his 14 letters addressed to the church communities, established by himself, and individual Christians.



**Եւ վերցնելով հինգ նկանակն ու երկու ձուկերը՝ նայեցաւ դէպի երկինք, օրհնեց, կտրեց եւ նկանակները աշակերտներուն տուաւ, իսկ աշակերտները՝ ժողովուրդին:**  
**Մատթ. 14:19**



**Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի կատարած հրաշքներէն, մասնակիցներու բազմութեան առումով, կ'առանձնանայ հացի բազմացման հրաշքը:**

**Աւետարանիչը կը պատմէ, երբ աշակերտները կը տեսնեն, որ հոծ բազմութեան համար այլեւս կերակուր չկայ, կ'առաջարկեն իրենց Վարդապետին արձակել ժողովուրդին, որպէսզի երթան եւ ուտելիք գնեն, սակայն Մեր Տէրը կը պատասխանէ, որ «հարկ չկայ, որ անոնք երթան, դո՛ւք անոնց ուտելու բան մը տուէք»:**

**Աշակերտները պտըտեցան ժողովուրդին մէջ, սակայն միայն հինգ նկանակ եւ երկու ձուկ գտնելով, բերին Յիսուսին մօտ: «Եւ Տէրը հրամայեց որ ժողովուրդի բազմութիւնը նստեցնեն խոտին վրայ. եւ վերցնելով հինգ նկանակն ու երկու ձուկերը՝ նայեցաւ դէպի երկինք, օրհնեց, կտրեց եւ նկանակները աշակերտներուն տուաւ. իսկ աշակերտները՝ ժողովուրդին: Բոլորը կերան ու յագեցան: Եւ տասներկու սակառ լեցուն կտորտանքներու մնացորդներ վերցուցին: Եւ անոնք, որ կերան, մօտ հինգ հազար հոգի էին՝ չհաշուած կանանց եւ երեխաներուն»:**

Քրիստոսի կողմէ կատարուած հրաշքը մեզի մի քանի կարեւոր պատգամներ կը փոխանցէ. Աշակերտները միայն հինգ նկանակ եւ երկու ձուկ գտան, բայց Քրիստոս այդ բազմացնելով կերակրեց հինգ հազար հոգիին: Այդքան հրաշքներու ականատես ըլլալէն յետոյ աշակերտներն անգամ չէին կրնար նոյնիսկ պատկերացնել, թէ իր Աստուածային զօրութեամբ ինչ կրնայ ընել Քրիստոս: Մեր կեանքին մէջ ալ այսօր շատ յաճախ, կը տրտնջանք մեր ունեցածէն, շատերը իրենց քիչ կարողութիւններէն, միւս մասն ալ իրենց առողջական տկարութիւններէն, սակայն շատ կաեւոր է միշտ յիշել, որ ինչպէս հինգ նկանակը միանալով Քրիստոսին՝ կերակրեց այդ բազմութիւնը, այդպէս ալ մենք, մեր տկար մարմինով երբ միանանք Քրիստոսին, կը դառնանք անելի զօրեղ եւ անելի պաշտպանուած ընդդէմ չարին եւ անոր բոլոր փորձութիւններուն:



Յետաքրքրական է, որ հացը բազմացնելու ժամանակ Քրիստոսի ըսած խօսքերը շատ կը նմանին Վերջին Ընթրիքի ժամանակ ըսուած խօսքերուն, երբ Քրիստոս վերցնելով հացը, կը նայի երկինք, գոհութիւն կու տայ եւ կը բաժնէ աշակերտներուն: Շատ կարեւոր հանգամանք է նաեւ հացը բաժնելու կերպը: Քրիստոս անձամբ չբաժնեց հացը, այլ այն տուաւ աշակերտներուն եւ անոնք ալ անհատապէս բաժնեցին ժողովուրդին: Այս հրաշքը երկինքէն իջած հացի, եւ այդ հացը աշակերտներու միջոցով ժողովուրդին բաժնուելու խորհուրդն ունի, որ խորքին մէջ նաեւ Ս. Յաղորդութեան խորհուրդի նախատիպն է եւ միանգամայն մեր հայացքին առջեւ կու գայ այն պահը, երբ քահանան երկնային հացը՝ Սուրբ Յաղորդութիւնն է որ կը բաշխէ ժողովուրդին:

Այսպիսով, այս հրաշքը մեզի համար միայն պատմական իրողութիւն չէ, որ եղած է, եւ մենք որպէս հրաշք կը պատմենք բոլորին, այլ՝ դա՛ս է մեզի համար եւ օրինակ, քանզի Քրիստոսին հետեւող ժողովուրդը գացած էր իր խօսքը լսելու եւ իր միջոցով Աստուծոյ ճանչնալու եւ երբեք չէր մտածած մարմնական սնունդին մասին: Եւ հացի բազմացման հրաշքին այսօրուայ ամենամեծ պատգամն է, որ նախ եւ առաջ պետք է երթանք Քրիստոսի ետեւէն, Աստուծոյ փնտռենք եւ Աստուծմով ապրինք մեր կեանքը, խնդրելով երկինքի արքայութիւնը, եւ այդ ժամանակ կը տեսնենք, որ մնացեալ ամէն

ինչը, ներառեալ սիւթական խնդիրները, որոնք կամաց կամաց պիտի լուծուին եւ կարգաւորուին:

Տ. Զրանդ Քինյ. Մանուկեան





## Եկեղեցւոյ Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներու

Պայծառակերպութիւն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի  
**Վարդապետ** – Ուխտագնացութիւն Դէպի Ռիկօ  
Կիրակի, 15 Յուլիս 2018

Վերափոխումն Ա. Աստուածածնի –

Խաղողօրհնէք – Կիրակի, 12 Օգոստոս 2018

Խաչվերաց – Կիրակի, 16 Սեպտեմբեր 2017

Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 27 եւ 28, 2018

Սանուկներու Ա. Ծնունդ / CFFA – Կիրակի, 2 Դեկտեմբեր 2018

Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 48-րդ Տարեդարձ –

Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018

### FEAST DAYS AND UPCOMING EVENTS

Feast of the Transfiguration of our Lord - Pilgrimage to Rigaud  
**Vartavar - Sunday, July 15th**

Feast of the Assumption of the Holy Mother of God -  
**Sunday, August 12th, 2018**

Feast of the Exaltation of the Holy Cross –  
**Sunday, Sept. 16th, 2018**

Annual Bazaar – Saturday & Sunday -  
**October 27 & 28, 2018**

Children's Christmas /CFFA –  
**Sunday, December 2nd, 2018**

Church 48<sup>th</sup> Anniversary –  
**Sunday, December 9<sup>th</sup>, 2018**



**Ուշադրութիւն**  
**մեր սիրելի**  
**հաւատացեալներուն**



**Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ: Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

*Ճիսական Խորհուրդ*

**Attention to our beloved parishioners,**

**If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.**

**Thank you for your cooperation.**

*Parish Council*



**ՇՆՈՐՀԱԻՐԱՆՔ  
Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ  
Ծխական Խորհուրդը  
ԷՎԱ ԱՆՆԱ ՍԵՄԵՐՋԻԱՆԻ**

Սկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով  
հրեւնց խորին շնորհաւորանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն  
եւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,  
որ փոքրիկն **ԷՎԱ ԱՆՆԱ ՍԵՄԵՐՋԻԱՆ**

Ս. Սկրտութեան աւագանէն իր վերստին ծնունդով արժանանայ  
Աստուածային Օրհնութեան  
իր կեանքի ամբողջ տեւողութեան:



**CONGRATUALTIONS  
ON THE  
BAPTISMAL CEREMONY**

*The Parish Council  
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral  
On the Baptismal ceremony  
of the child  
**EVA ANNA SEMERJIAN***

Extend their heartfelt congratulations  
to the child parents & family.



# ՆՈՒԻՐԱՏՈՒՄԻՑԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal  
Donations of June 2018  
have been received with great appreciation***



**Dr. & Mrs. Bagdasar Agopyan \$100**

## **RELICS OF ST. HAGOP METZPENA**

**Dr. Garo Vartazarmyan, Hagop Mazmanian \$1000,  
Mr. Agop Sirinyan, Mr. Mr. Hagop Seraidaryan \$500,  
Mr. Jack Berberian \$100**

**IN MEMORY OF HER BELOVED HUSBAND  
THE LATE AGOP ASICIYAN  
Mrs. Irma Asiciyan \$200**

## **IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:**

### **THE LATE TAKOUHIE AJAMIAN**

**Miss Sonia & Alice Soghomonian \$200, Mr. Berdge Manoukian, Mr. &  
Mrs. Zaven Tchaylakian, Chaya & Roukos Families, Mr. & Mrs. Haig &  
Sonia Manoukian, Mr. & Mrs. Walid Hajjar \$50, Mr. Vartan Jakalian \$40,  
Mrs. Lucie Chahinyan \$35, Mrs. Takouhie Manguian \$30, Miss Lori  
Manoukian, Mr. Aren Manoukian \$20**

**THE LATE ANNIE KALEMJIAN**

**Mrs. Lara Boyan \$150, Mrs. Andrusha Petrosyan \$100**

**HOKEHANKISD**

**THE LATE DN. ARTO KEPEKCI**

**Kepekci Family \$300, Mr. & Mrs. Ara & Marie Gerikyan,**

**Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$50,**

**Mr. & Mrs. Krikor & Irma Merekyan \$40, Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian,**

**Mr. & Mrs. Jirayr & Anahid Dolar \$20, Mr. Antranik Sirinyan \$10**

**THE LATE SISMANYAN FAMILY**


**Mr. & Mrs. Robert Sismanyan \$70**





# ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL

*ԿԻՐԱԿԻ, 1 Յուլիս 2018*



Տօքթ. Արթո ՏԵՄԻՐՃԵԱՆԻ,  
Տօքթ. ԵՆ ՏԻԿ. Արի ԵՆ ՋԵՐԱ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ԵՆ ՉԱԼԿԻՆ,  
Տ. ԵՆ ՏԻԿ. ՎԻԳԵՆ ԵՆ ԼԵՆԱ ԼԻՎԱՐԻՈՒՄԵԱՆԻ ԵՆ ՉԱԼԱԿՆԵՐՈՒՆ,  
ՏԻԿ. ՆԱՏԻԱ ՍՈԼՔԻԱՍԻ ԵՆ ԴՈԼՍՏՐԻՆ,  
ԵՆ ԽԱՄԱՅՆ ԱՉՉԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՆ ԽԱՐԱՉԱՏՆԵՐՈՒ,  
ԽՆԴՐԱՆՔՈՎ ԽՈԳԵԽԱՆՉԱՏԵԱՆ ԱՅԱՉՏՈՆ ԱԽՏԻ ԿԱՏԱՐՈՒԻ  
ԻՐԵՆՑ ՍԻՐԵԳԵԱԼ ԿՆՈՉ, ՄՕՐ, ՄԵԾ ՄՕՐ ԵՆ ԽԱՐԱՉԱՏԻՆ,`

## ՍՕՆԱ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ

(SONA DEMIRJIAN)

Մահուան 40-ին առիթով  
Ջոզեֆաշի սպասարկուրթին  
«Մարի Մանուկեան» սրահին մէջ,  
Նախաձեռնութեամբ` Ծխական Խորհուրդին,  
Պատրաստութեամբ` Տիկնանց Յանձնախումբին



Տիկ. Ասթրի Մուրատեանի եւ զաւակներուն՝ Ստեփանի եւ Մայքըլի,  
Տ. եւ Տիկ. Ֆրանսուա Ռաշայի եւ Թամար Մուրատեանի եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Արթօ եւ Անի Մուրատեանի եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Յակոբ Մուրատեանի,  
Պրն. Լեւոն Մուրատեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր, եղբօր եւ մեծ հօր՝

**ՊԵՐՃ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ**  
**(BERDGE MOURSADIAN)**  
Մահուան առաջին տարելիցին առիթով





## ՑԱԲԱԿՑԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ  
Եկեղեցւոյ  
Ծխական Խորհուրդը  
Ողբացեալ

### **ԹԱԳՈՒՅԻ ԱՃԱՄԵԱՆԻ (TAKOUSHIE AJAMIAN)**

Մահուան տխուր առիթով  
իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն  
հանգուցեալի  
բոլոր պարագաներուն, աղօթելով առ Աստուած,  
որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:





# Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ

## 2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Ձեռնարկ
Յուլիս	15, Կիրակի	«Պայծառակերպութիւն» Խաչալուայ Ջրօրհնէք Վարդավառ
	9, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Յոգեհանգստեան Պաշտօն
Օգոստոս	12, Կիրակի	Տօն «Վերափոխումն Ս. Աստուածածնի» Խաղողօրհնէք Աւարտին Ճաշկերոյթ Եկեղեցւոյ շրջափակին մէջ
	13, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Յոգեհանգստեան Պաշտօն
Սեպտեմբեր	16, Կիրակի	Ս. Խաչվերաց Մատաղ Վաչէ Յովսէփեան սրահ
	17, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Յոգեհանգստեան Պաշտօն
	21, Ուրբաթ	Հայաստանի Հանրապետութեան 25-րդ Տարեդարձ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պագար «Մարի Մանուկեան» սրահ

<b>Նոյեմբեր</b>	<b>10, Շաբաթ</b>	<b>«Առնիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ</b>
<b>Դեկտեմբեր</b>	<b>2, Կիրակի</b>	<b>Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ</b>
	<b>9, Կիրակի</b>	<b>Եկեղեցւոյ Գմման եւ Օծման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ</b>
	<b>31, Երկուշաբթի</b>	<b>ՆՈՐ ՏԱՐԻ</b>



## **Գրաւուած Օր**

**«Կոմիտաս» Դպրաց Դաս Երգչախումբի  
Յիմնադրութեան 60 Ամեակի**

**Յանդիսութիւն**

**10 Նոյեմբեր 2018, Շաբաթ երեկոյեան**

**Կը խնդրուի չխաչաձեւել:**

**Մանրամասնութիւնները յաջորդիւ:**

**Շնորհակալութիւն  
Ծխական Խորհուրդ**



## Յայտարարուժիւն

Միքելի հաւատացեալներ կը փափաքինք տեղեկացնել ձեզ թէ յետայսու Ծիական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, Ծիական Խորհուրդը մեր հաւատացեալներուն պիտի յատկացնէ առիթը խորհրդակցական հանդիպում մը ունենալու Ծիական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

Շնորհակալութեամբ՝  
Ծիական Խորհուրդ  
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ



# Lancement du Groupe Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont



**Nous vous invitons à vous joindre à notre nouvelle Chorale d'Enfants « Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont » (âge d'inscription 7 à 15 ans).**



**Les pratiques débuteront dimanche le 14 janvier 2018, à l'Église St-Grégoire l'Illuminateur, situé au 615 Av. Stuart à Outremont et auront lieu de 13h00 à 14h00. Elles se poursuivront par la suite tous les dimanches selon ce même horaire.**

**Les cours seront donnés par le professeur Karen Manucharyan diplômé du Conservatoire de Yerevan, en Arménie, qui assumera la direction de cette chorale.**

**Les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège**

**Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.**

**La participation est gratuite. Venez nombreux participer à cette expérience enrichissante!**

**Pour des informations additionnelles,  
svp vous adresser au  
(514) 279-3066 ou à [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)**

**Conseil paroissial**





# Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մանկական Երաժշտական Խումբ



Ձեզ կը հրաւիրենք միանալու մեր նոր մանկական երգչախումբին «Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont» - (գրանցման տարիք 7-15 տարեկան):



Փորձերը կը սկսին Կիրակի, 14 Յունուար 2018, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, կ.ե. ժամը 1:00 2:00 - հասցէ 615 Stuart Avenue Outremont-ի մէջ:

Փորձերը պիտի շարունակուին կատարուիլ ամէն Կիրակի, վերոյիշեալ նոյն ժամուին:

Դասընթացքները պիտի կատարէ Երեւանի երաժշտանոցէն շրջանաւարտ, Կարէն Մանուչարեան, որ կը ստանձնէ նաեւ՝ երգչախումբին ղեկավարութիւնը:

Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նորաները, եւ միաժամանակ մշակելով անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:

Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Չայերէն լեզուներով:

Մասնակցութիւնը անվճար է: Եկէ՛ք եւ օգտուեցէք այս պատեհ առիթէն:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք հեռաձայնել (514)279-3066 կամ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Ծիական Խորհուրդ



# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



**ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ**

**ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ**

**ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ  
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ**

**Արդեն իսկ տեղի կ'ունենան ամեն**

**Յինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին**

**Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Եկեղեցւոյ մէջ:**

**Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս  
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն ընթացքին  
միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ Գիրքը, Եկեղեցւոյ  
հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն ու մասնակցութիւնը  
եկեղեցւոյ կեանքին մէջ եւ վերջապէս պատասխան գտնել մեզ  
յուզող հարցումներուն ու մտահոգութիւններուն:**

**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:**

**Աղօթարար՝**

**Տ. Յայարի Քհնյ. Թանաշեան**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/

[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal  
ԵԼ / And  
Լաւալի Ս. Խաչ Յայաստանեայց Առաքելական Եկեղեցի  
Holy Cross Armenian Church of Laval



## ՎԱՐԴԱՎԱՌ / VARTAVAR

Քրիստոսի Այլակերպութեան Տօնին Առիթով  
Transfiguration of our Lord Jesus Christ

### Ուխտագնացութիւն Դեպի Ռիկօ Pilgrimage to Rigaud

43 Rue de Lourdes, Rigaud, QC

**Կիրակի, 15 Յուլիս / Sunday, July 15, 2018**

Ս. Պատարագ / Holy Mass

Կէսօրին ժամը / at - 12:00 noon

**Օթօպիւսի մեկնումի վայրեր.-**

Մոնթրեալ – Normandie Shopping Center (Rue Salaberry)

Լաւալ – Ս. Խաչ Յայց. Առաք. Եկեղեցի

(St. Martin O.) առաւօտեան ժամը 10:00-ին

**Սակ - \$25 (Օթօպիւս եւ ճաշ)**

- Անձնական Միջոց – \$15 (ճաշ)

**Սակ Փոքրերու - \$15 (Օթօպիւս եւ ճաշ)**

- Անձնական Միջոց Փոքրերու Սակ - \$10 (ճաշ)

### **Bus Transportation:**

Montreal – Normandie Shopping Center (Rue Salaberry)

Laval – Holy Cross Armenian Church (St. Martin O.)

at 10:00 am

**Fee – Adult - \$25 (Bus & Lunch)**

- Personal Transportation Adult - \$15 (Lunch)

**Fee - Child - \$15 (Bus & Lunch)**

- Personal Transportation Child - \$10 (Lunch)
- Տեղերու ապահովութիւնն ու արձանագրութիւնը անհրաժեշտ է բոլորին Օթօպիւս եւ անձնական միջոց, կը խնդրենք հեռաձայնել եկեղեցիներու Զարտուղարութեան մինչեւ 9 Յուլիս 2018
- Reservation & registration required for Bus and Personal Transportation Users, please call the Church office until July 9<sup>th</sup>, 2018  
at: Մոնթրեալ / Montreal – (514) 279-3066  
Լաւալ / Laval – (450) 687-5355



Ծխական Խորհուրդը / Parish Councils



## Canada Summer Students Jobs 2018

### 3 Positions Being Offered-

#### Job Titles and Descriptions:

- 1. Administrative/office assistant:** digital filing, archiving project, data base management
- 2. IT/Website development assistant:** maintain church website, introduce new material fields possibilities (videos, news letters, graphics, event communication)
- 3. IT/Social media development assistant:** maintain church social media project (Facebook, Twitter, Instagram), enhance electronic communication with parishioners/community

**Work Location:** The Armenian Holy Apostolic Church (St-Gregory)  
615 Stuart Avenue, Outremont, QC, H2V 3H2

**Duration of employment:** 6 weeks Full-time  
From July 1<sup>st</sup> to August 31<sup>st</sup> 2018 (flexible)

**Academic Level:** Post-Secondary

**Language Requirement:** English and French

**Contact** person: Maral at 514-279-3066 or at [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)